

Մրցակցային քաղաքականության նպատակների ձեռք բերումը ենթադրում է.

- տնտեսական գործունեության իրականացման վարչական խոչընդոտների վերացում,
- ասյրանքային և ֆինանսական շուկաներում տնտեսական կենտրոնացման նկատմամբ պետական վերահսկողության արդյունավետության բարձրացում՝ մենաշնորհային բնույթի կառույցների ձևավորման և հակամրցակցային համաձայնությունների կանխման կանխարգելման նպատակով,
- առևտրային կազմակերպությունների ստեղծման, միավորման, միաձուլման, բաժնետոմսերի խոշոր փաթեթի ձեռք բերման, ինչպես նաև այն գործընթացների թափանցիկության ապահովում, որոնք կարող են որոշակի կազմակերպությունների հնարավորություն ընձեռել շուկայում գրավելու գերիշխող դիրք,
- բորսայական առևտրի զարգացման խթանում, որպես մրցակցային միջավայրի ձևավորմանը խթանող միջոցի,
- ասյրանքային շուկաներ մուտքի արգելքների վերացում և առավել արդյունավետ վերահսկողության իրականացում այն տնտեսավարող սուբյեկտների վարքագծի նկատմամբ, որոնք գերիշխող դիրք են զբաղեցնում շուկայում,
- պետական իշխանության ներկայացուցիչների կողմից տնտեսական գործունեությամբ զբաղվելու հնարավորությունների բացառման համար համապատասխան օրենսդրական լծակների ներդրում և կիրառում:

Հանրապետությունում ձեռնարկատիրական բարենպաստ միջավայրի ձևավորման կարևոր պայմաններից մեկն է հանդիսանում պետական միջամտության տարբեր ձևերի կիրառման համակարգումը, բյուրոկրատական կարգավորման միջոցներից հրաժարումը և պետական իշխանության գործողությունների արդյունավետության բարձրացումը այն ոլորտներում, որոնցում դրա կարիքը գոյություն ունի:

Հիմնական խնդիրը, որը կոչված է լուծել տնտեսության ապակարգավորումը, դա բիզնեսի վրա բյուրոկրատական ճնշման մեղմումն է, տնտեսական գործունեության մասնակիցների տնտեսական ազատության աստիճանի բարձրացումը: Այս առումով, կատարելագործման կարիք ունեն լիցենզիաների և գործունեության իրականացման համար անհրաժեշտ մի շարք այլ փաստաթղթերի տրամադրման ընթացակարգերը: Տնտեսական գործունեության կարգավորման առումով կարևոր խնդիրներ են հանդիսանում շուկա մուտք գործելու արգելքների, արտադրության և առևտրի ոլորտում տեխնիկական բնույթի խոչընդոտների վերացումը, ձեռնարկատիրական գործունեության ոչ արդյունավետ և ավելորդ վարչական կարգավորման վերացումը, պետական և տեղական մարմինների գործողությունների փոխհամաձայնեցումը և այլն:

Ընդհանուր առմամբ, նշված խնդիրներն են հիմնականում հանդիսանում խոչընդոտներ հանրապետությունում գործարար միջավայրի բարելավման համար: Ակնհայտորեն, առաջիկա տարիներին իրականացվող տնտեսական քաղաքականությունը պետք է ուղղված լինի դրանց լուծմանը և, հետևաբար նաև, գործարար միջավայրի բարելավմանը:

ԴԱՎԻԹ ԱՐԱՋԱՆՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ*

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱՍՏՈՒԹՅԱՆ ՍԱՅՄԱՆՆԵՐԸ

Աշխարհի բոլոր երկրներում պետական ինստիտուտը գտնվում է համընդհանուր ուշադրության կենտրոնում: Համաշխարհային տնտեսության մեջ կատարվող անընդհատ փոփոխությունները ստիպում են գտնել պետությանը վերապահված հիմնական հարցերի պատասխանները. ինչպիսի՞ն պետք է լինի պետության կարգավորիչ դերը տնտեսական համակարգում, որ հարցերով պետք է զբաղվի, որոնցով՝ ոչ, այս կամ այն տնտեսական իրավիճակներում ինչպիսի օպտիմալ որոշումներ պետք է կայացնի: Վերջին տարիներին մի շարք երկրներում իրականացվող անցումը պլանայինից շուկայական համակարգի տնտեսական ճգնաժամ առաջացրեց այդ երկրներում: Այս հանգամանքը նորից կասկածի տակ դրեց տնտեսության կարգավորման գործում պետության դերի կարևորությունը: Եթե 20-րդ դարի սկզբին ենթադրվում էր, որ տնտեսական աճը պետք է ապահովի պետությունը, ապա հետագա ժամանակաշրջանում կուտակված փորձն այլ բան է վկայում՝ պետությունը կարևոր դեր է խաղում տնտեսական և սոցիալական աճն ապահովելու գործում, բայց տնտեսական աճի անմիջական աղբյուրը չէ:

Տնտեսագիտության տեսության մեջ մինչև վերջին ժամանակներս տնտեսությանը պետության միջամտության հիմնախնդրի լուծման վերաբերյալ գոյություն ունեին երկու միմյանց հակադիր մոտեցումներ: Համաձայն առաջինի՝ հասարակական արտադրության առավելագույն արդյունավետության կարելի է հասնել՝ դրա յուրաքանչյուր մասնակցին անսահմանափակ տնտեսական ազատություն տալով: Այլ կերպ ասած՝ տնտեսական լիբերալիզմը տնտեսական գործունեության կոորդինացման համար շուկաների և մրցակցության հնարավոր առավելագույն օգտագործումը պաշտպանող ուսմունք է (դոկտրին): Այն պետությանը թողնում է միայն այնպիսի գործառնություններ, որոնք շուկան չի կարող իրականացնել (օրինակ՝ հանրային բարիքների արտադրությունը), ինչպես նաև այնպիսի կառուցվածքի ստեղծմանն ուղղված գործառնություններ, որոնց սահմաններում մասնավոր ընկերությունները և շուկաները կկարողանան արդյունավետ գործել, օրինակ՝ սեփականության իրավունքների, հակամենաշնորհային քաղաքականության և պայմանագրային պարտավորությունների

կատարումը սահմանող օրենսդրությամբ ապահովումը¹: Սակայն տնտեսության այդպիսի կառավարման ձևին յուրահատուկ են տնտեսական ճգնաժամերը և սոցիալական հակասությունները:

Հակադիր տեսակետի կողմնակիցները գտնում են, որ արտադրության մասնակիցների գործողությունները պետք է ենթարկվեն հասարակության իշխանության գլխավոր ինստիտուտի՝ պետության կողմից իրականացվող կոշտ սոցիալական կարգավորման, որը տիրապետում է արտատնտեսական հարկադրանքի իրավունքին և ուժին: Տնտեսության կառավարման այս ձևը, կամ որ նույնն է, տնտեսական պլանավորումը ենթադրում է տնտեսական գործունեության ինստիտուցիոնալ կոորդինացում: Ի տարբերություն տնտեսական լիբերալիզմի՝ տնտեսական պլանավորման դեպքում պետությունը կամ այլ ինստիտուտները ձգտում են օգտագործման այլընտրանքային ոլորտների միջև արտադրության գործունեների գիտակցված բաշխման միջոցով որոշել վերջնական արտադրանքի ծավալը և կառուցվածքը²:

Այս ամենն, իհարկե, պայմանական է և գոյություն ունեն պետության դերին, վերջինիս՝ տնտեսությանը միջամտության չափին վերաբերվող բազմաթիվ տեսություններ, որոնք ներառում են այսպես կոչված «նվազագույն» պետության հայեցակարգից մինչև Պարետոյի օպտիմալության տարբերակը:

Չխորանալով տնտեսության նկատմամբ պետության վարքագծին վերաբերվող տեսությունների ու դրանց գործնական կիրառության ձևերի վերլուծության մեջ՝ փորձենք պարզել մեր հանրապետությունում այդ առնչությամբ տեղի ունեցող փոփոխությունները:

Սոցիալիստական համակարգի փլուզումից հետո հետհամայնավարական երկրներն անցումը շուկային իրականացրեցին ունենալով տարբեր ելակետային դիրքեր, սակայն դրանց մեծ մասում շուկայական վերափոխումները սկսվեցին սեփականության հարաբերությունների բարեփոխումներով և համապատասխան ինստիտուտների կայացմամբ: Անցումային տնտեսությամբ բոլոր երկրներն այս կամ այն չափով «բախվել» են սեփականության ինստիտուտի կայացման (կամ վերականգնման) հիմնախնդրին, առանց որի պարզապես անհնար է շուկայական տնտեսության գործունեությունը: Ընդ որում, այդ վերափոխումների ծավալները և արագությունը կախված էին ամենից առաջ երկրի քաղաքական ղեկավարության կամքից, իսկ վերափոխումների հաջողությունը՝ սեփականության բոլոր տեսակների զարգացման մախաղթյալների ստեղծման և դրանց արդյունավետ գործունեության ապահովման ընդունակությունից:

Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի մի շարք երկրների համար այդ գործընթացը վերադարձ էր այն համակարգին, որն այդ երկրներում գոյություն ուներ ոչ վաղ անցյալում, հետևաբար այն պահպանվել է ապրող սերունդների հիշողության մեջ, մինչդեռ հետխորհրդային երկրների համար դա այն ինստիտուտների վերականգնումն է, որոնք տոտալիտար համակարգի պայմաններում գրեթե ամբողջությամբ ջնջվել էին մարդկանց հիշողությունից:

Հայաստանը հետհամայնավարական տարածքում առաջիններից մեկն էր, որ սկսեց պետական սեփականության վերափոխումները: Սեփականության ապապետականացումը և մասնավորեցումը (սկզբնապես՝ սեփականաշնորհում) դարձան սեփականության իրավունքի ձևավորման, զարգացման և կայացման հիմքը, արտադրության միջոցների, այդ թվում՝ հողի նկատմամբ մասնավոր սեփականատիրական հարաբերությունների կառուցման հիմնական միջոցը³: Այդ բարեփոխումների արդյունքում տարեցտարի մեծացավ ՀՆԱ-ում մասնավոր հատվածի տեսակարար կշիռը՝ 2005 թվականին կազմելով ավելի քան 80%⁴: Փաստորեն, մեզանում մասնավոր սեփականության ինստիտուտը կարելի է կայացած համարել, կամ առնվազն պետք է փաստել, որ Հայաստանն այդ ճանապարհին հասել է լուրջ հաջողությունների, քանի որ վերը նշված ցուցանիշի առումով մեր երկիրը չի զիջում անգամ զարգացած երկրներին: Սակայն տնտեսության գերակշիռ մասը մասնավոր ընկերություններին «վստահելն» ամենևին էլ չի նշանակում, թե պետությունը հրաժարվում է տնտեսությունը կառավարելու իր գործառույթից: Ընդհակառակը, համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ զարգացմանը զուգընթաց պետություններն իրենց վրա են վերցնում նորանոր գործառույթներ՝ դրան համապատասխան մեծացնելով պետական ծախսերի մակարդակը: Վերջիններս կարևորվում են նաև անցումային տնտեսությամբ երկրներում, որտեղ շուկայական հարաբերությունները դեռևս կայացած չեն և շուկայի ձախողումները կարող են հանգեցնել անդառնալի հետևանքների: Ուստի պետությունն իր վարած քաղաքականությամբ պետք է ուղղակի և անուղղակի միջոցներով նպաստի տնտեսական զարգացմանը, և հնարավորինս մեղմի հատկապես անցումային փուլին բնորոշ սոցիալական լարվածությունը: Ցավոք, ՀՀ-ում պետական ծախսեր/ՀՆԱ հարաբերակցությունը դեռևս հեռու է ինչպես զարգացած պետությունների, այնպես էլ անցումային փուլում գտնվող բազմաթիվ երկրների համապատասխան ցուցանիշից (Տե՛ս, աղյուսակ 1):

Աղյուսակ 1-ի տվյալները հստակ պատկերացում են տալիս այն մասին, որ Հայաստանը ՀՆԱ-ի նկատմամբ համախառն պետական ծախսերի մակարդակով զիջում է վերը բերված անցումային տնտեսությամբ բոլոր երկրներին (2005թ. տվյալներով): Ընդ որում, եթե այդ երկրների միջին մակարդակը ՀՀ-ին գերազանցում է ավելի քան երկու անգամ, ապա առանձին երկրներին՝ ավելի քան 30%-ով (Հունգարիա, Բելառուս, Խորվաթիա, Բոսնիա և Հերցեգովինա): Իհարկե, պետական ծախսերի բարձր կշիռ ունենալը տնտեսության համար որպես միանշանակ լավ հանգամանք չի կարող դիտարկվել: Մի կողմից պետական ծախսերի բարձր մակարդակը վկայում է տնտեսության առավել զարգացածության մասին, մյուս կողմից՝ որքան մեծ է պետական ծախսերի

¹ Словарь современной экономической теории, Макмиллана, М.: Инфра-М., 2003, стр. 145.

² Словарь современной экономической теории, Макмиллана, М.: Инфра-М., 2003, стр. 145.

³ Տե՛ս, մասնավորապես, Ա. Խ. Մարկոսյան, Պետական ձեռնարկությունների ապապետականացման կառավարում. մեթոդաբանություն, ռազմավարություն և արդյունքներ, Եր., «Լույս», 1997, 446 էջ:

⁴ Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության հաշվետվություն, Երևան, 2006, էջ 10:

Ընդհանուր առմամբ պետք է նշել, որ կառավարության գործունեության հին ծրագրի տնտեսական ոլորտին վերաբերող բաժինն առավել հարուստ է տնտեսությանը պետական միջամտության մասին դրույթներով, քան նոր ծրագիրը: Այդ դրույթներում հիմնականում նախատեսվում է ներդրումների պաշտպանության երաշխիքների զարգացում, այդ թվում նաև ներդրողների նպատակային աջակցության ծրագրերի իրականացում, ընդգծված արտահանման ուղղվածություն ունեցող տնտեսության ճյուղերին, ինչպես նաև տնտեսական կլաստերների հետագա զարգացմանը և նորերի ձևավորմանը պետական աջակցության ցուցաբերում, քանի որ վերջիններս կարևորվում են ինչպես տնտեսության զարգացման ճյուղային և տարածքային զարգացման համամասնությունների ապահովման, այնպես էլ երկրի մրցունակության բարձրացման տեսանկյունից: Ծրագրում հատուկ նշվում է նաև տնտեսությունը զարգացման նորամուծական ուղի փոխադրելու անհրաժեշտությունը, որի համար կառավարությունը նախատեսում է առանձնակի ուշադրություն դարձնել տեխնոլոգիական փոխանցումների (ազգային և միջազգային մասշտաբներով) մեխանիզմների ստեղծմանը:

Գործարարության զարգացումը խթանող պետական միջոցառումներից կարելի է նշել նպատակային ներդրումների ներգրավման համար տարածքային տնտեսական զարգացման ծրագրերի մշակումը, բիզնես համաժողովների, ցուցահանդեսների կազմակերպումը, համատեղ ներդրումային ու զբաղվածություն ապահովող ծրագրերի առանձնահատուկ պաշտպանությունը:

Կառավարության գործունեության հին և նոր ծրագրերում որպես տնտեսական զարգացման առաջնային նախապայման է դիտվում գործարար և ներդրումային միջավայրի բարելավումը: Բնական է, որ այս ուղղությամբ պետական միջամտությունն առավելապես պետք է ունենա անուղղակի բնույթ և ուղղված լինի տվյալ ոլորտին առնչվող ինստիտուտների ներդրմանն ու եղածների կայացմանը: Այս առումով կառավարության ծրագրերը հիմնականում նույնն են և ուղղված են օրենսդրական թերությունների ու պաշտոնական մեկնաբանությունների անկանխատեսելիության վերացմանը, դատական համակարգի, ֆինանսական միջոցառության, հարկային և մաքսային վարչարարության որակի բարելավմանը: Ներդրումային քաղաքականությունում շեշտը դրվում է մասնավոր կապիտալի ներգրավման վրա, իսկ կառավարության նոր ծրագրում հատուկ ընդգծվում է նաև նաև պետական-մասնավոր գործընկերության անհրաժեշտությունը՝ հատկապես ենթակառուցվածքների ոլորտում: Ընդ որում, նոր ծրագրով սահմանվում է ներդրումների մակարդակի որոշակի կոնկրետ միջակայք՝ ՀՆԱ-ի նկատմամբ 27-30%, որի պայմաններում հնարավոր կլինի ապահովել տարեկան 8-10% տնտեսական աճ:

Ցավոք, Կառավարության ծրագրերի՝ տնտեսության հիմնական ճյուղերին վերաբերող բաժիններում հստակ չի նշվում, թե պետությունն ինչ միջոցներով է պատրաստվում աջակցել արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացմանը, իսկ նախատեսվող բարեփոխումներն էլ հիմնականում ինստիտուցիոնալ բնույթի են և վերաբերում են բիզնեսը խոչընդոտող գործոնների վերացմանն ու բարենպաստ ներդրումային միջավայրի ստեղծմանը:

Արտադրական ենթակառուցվածքների ոլորտում նկատելի է որոշակի ուղղություններով պետական քաղաքականության փոփոխություն: Մասնավորապես, եթե կառավարության գործունեության նախորդ ծրագրով նախատեսվում էր վառելիքաէներգետիկ համակարգը հիմնականում պահպանել պետական հոգածության ներքո, ապա նոր ծրագիրը կարևորում է ոլորտում պետական մասնակցության աստիճանական կրճատումը և մասնավոր ներդրումների ներգրավումը: Նույնը կարելի է ասել նաև ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի մասին. եթե նախորդ ծրագրով ոլորտի հիմնական բեռն ընկնում էր պետության ուսերին, ապա նոր ծրագիրը նախատեսում է ոլորտի ուղղակի կառավարումից պետության աստիճանական հրաժարում՝ հոգուտ մասնավոր ընկերությունների: Այնուամենայնիվ, Կառավարությունը շարունակելու է իր ներդրումային քաղաքականությունը, հատկապես՝ գյուղական բնակավայրերի ջրամատակարարման ներդրումային ծրագրերում:

Անդրադառնալով սոցիալական ոլորտին՝ նշենք, որ ընդհանուր առմամբ երկու ծրագրերում էլ Կառավարությունը կարևորում է պետական ծախսերի ավելացումը: Ընդ որում, եթե նախորդ ծրագրում առողջապահության ոլորտի համար նշվում է միայն, որ պետական ծախսերի աճը պետք է լինի ավելի մեծ, քան ընդհանուր բյուջետային ծախսերի աճը, ապա նոր ծրագրում այդ ծախսերը հստակ սահմանված մեծություն են (2012 թվականին՝ առնվազն 2.2 ՀՆԱ-ի նկատմամբ)¹: Սոցիալական ապահովության և ապահովագրության բնագավառում պետությունը շարունակելու է իր դերակատարումը և ոլորտի ֆինանսավորումը միջնաժամկետ հատվածում լինելու է Կառավարության ծախսային քաղաքականության գերակայությունը:

Վերը թվարկված ոլորտներում կառավարության քաղաքականությունն, ըստ էության, արտահայտում է ժամանակի պահանջները. պետությունն աստիճանաբար հրաժարվում է տնտեսության ուղղակի կառավարումից և նախապատվությունը տալիս է մասնավոր ընկերությունների հետ համագործակցությանը: Բացի այդ, Կառավարությունն ապահովելով իր գործունեության ծրագրերի շարունակականությունը, նախատեսում է պետական ծախսերի աստիճանական ավելացում: Մակայն, մեր կարծիքով այդ ծախսերի մակարդակը դեռևս բավականին ցածր է, իսկ Կառավարության նոր ծրագրով սահմանված նպատակային ցուցանիշները բավարար չեն առաջիկայում այնպիսի բազայի ստեղծման համար, որը կապահովեր երկարաժամկետ հատվածում տնտեսության զարգացումը: Այս առումով կարևորում ենք հատկապես կրթության և գիտության ոլորտին, ինչպես նաև տնտեսության հիմնական ճյուղերի զարգացմանն ուղղվող պետական ֆինանսավորման մեծացումը, սակայն ավելի մեծ չափով, քան նախատեսված է Կառավարության գործունեության նոր ծրագրում:

¹ Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիր, Երևան, 2007, էջ 49: